
ԲԱՅԱԿԱՆ ԱՆՑՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՆՑՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԵՐԵՆՈՒՄ

ԶԱՔԱՐՅԱՆ Շ. Ի.

Բառական յուրաքանչյուր ձև, որը կոչվում է բայ, ամենից առաջ հանդես է գալիս ընդհանուր բայիմաստով, սեռով և բայական հոլովառությամբ, իսկ սրանից բխող կամ սրա հետ կապված քերականական մյուս կարգերը կարող են լինել կամ չլինել տվյալ բառաձևում:

Բայ խոսքի մասն արտահայտում է գործողություն, եղելություն, դրսևորվում է ուրույն կարգերով, ունի բառակազմական և ձևակազմական կադապարներ, խոնարհման հարացույց և անդեմ ձևեր:

Բայասեռի կարգը բայի քերականական կարևորագույն հատկանիշներից մեկն է:

Ինչպես նկատել են խորհրդային թուրքագետ լեզվաբանները, առհասարակ, ըստ օբյեկտի հետ հարաբերության, բայերը լինում են անցողական և անանցողական: Բայերի անցողականությունը և անանցողականությունը քերականորեն ներկայանում են բայի ու հայցական հոլովով արտահայտվող ուղիղ խնդրի հարաբերությամբ: Եթե պարզ ձևով բնութագրենք, բայը հայցական հոլովով դրված ուղիղ խնդիր պահանջելու և ընդունելու հատկություն ունենալու դեպքում անցողական է, իսկ եթե այդ հատկությունը չունի՝ անանցողական է:

Տեսական այս մոտեցմամբ կարող ենք քննել ժամանակակից թուրքերենի բայական անցողական (geçişli) և անանցողական (geçişsiz) դրսևորումները:

Բայի անցողականության ու անանցողականության խնդրին հանգամանորեն անդրադարձել են նաև հայ լեզվաբանները՝ տալով հստակ սահմանումներ, որոնք հիմք են մեր սույն ուսումնասիրության համար: Թեև դրանք վերաբերում են հայոց լեզվին, սակայն կարող ենք ասել, որ այդ սահմանումները բնութագրական են նաև թուրքերենի բայական համակարգի քննության համար: Ընդհանուր առմամբ, երկու լեզուներում բայը բնութագրվում է նույն կարգերով:

Խոսելով բայի անցողականության մասին՝ կարող ենք հստակորեն նշել, որ այն առաջին հերթին առարկայի գործողության կամ եղելության՝ անմիջականորեն մի ուրիշ առարկային ուղղվելն ու իր ոլորտի մեջ ընդգրկելը և նրա վրա անցնելն է: Բայի անցողականությունը, ունենալով նաև պատճառման, դրդման, միջնորդման ուղղվածություն, առարկային հաղորդում է գործելու, լինելու յուրահատկություն, և անմիջական առարկան ներկայացվում է ոչ միայն կրողի, այլև գործողի ու լինողի լրացուցիչ դերով (ուրախացնել մեկին), ուստի խնդիրն էլ լրացուցիչ գործառույթ է ստանում:

Որոշ գործողությունների և եղելությունների իրագործման համար անհրաժեշտ է լինում իրական կամ տրամաբանական անմիջական օբյեկտ, որը բայի անցողականության քերականական հատկանիշի դրսևորման որոշման հաստատուն

հենարան է դառնում այն դեպքում, երբ հայցական հոլովի ձևով արտահայտություն է ստանում նախադասության մեջ՝ որպես ուղիղ խնդիր¹:

Թուրք քերականագիտության մեջ անցողական է կոչվում այն բայը, որի արտահայտած գործողությունն ազդեցություն է գործում շնչավոր կամ անշունչ մեկ այլ առարկայի վրա:

Լեզվաբան Նուրեթին Քոչը թուրքերենի բայահիմքերը բաժանում է երկու խմբի՝ անցողական բայահիմքեր (geçişli eylem kökü) և անանցողական բայահիմքեր (geçişsiz eylem kökü) : Այն բայերը, որոնք նախադասություն կազմելիս պահանջում են խնդիր, կոչվում են անցողական բայեր (transitive)². օրինակ՝ yazmak (գրել), koymak (դնել):

Mehmet mektup yazıyor. - Մեհմեդը նամակ է գրում:

Alis gazeteyi masanın üzerine koydu. - Ալին թերթը դրեց սեղանին:

Անցողական բայից ներգործվող բառը կոչվում է ուղիղ խնդիր (nesne) և պատասխանում է kimi?, neyi?. (ո՞ւմ, ի՞նչը) հարցերին³:

Օրինակ՝ Ayşe çiçekleri suluyor. - Այշեն ծաղիկներն է ջրում:

Ayşe neyi suluyor? - Այշեն ի՞նչ է ջրում:

Իսկ եթե ենթակայի կատարած գործողությունը որևէ այլ առարկայի վրա չի ազդում, ապա այդ գործողությունն արտահայտող բայն անվանում են անանցողական բայ: Անանցողական բայերը չեն պատասխանում neyi?, kimi? հարցերին⁴: Այսպես, թուրքերենի անանցողական բայերից են՝ ölmek (մեռնել), doğmak (ծնվել), gülmek (ծիծաղել), gelmek (գալ), gitmek (գնալ), barışmak (հաշտվել), oturmak (նստել), korkmak (վախենալ), yatmak (պառկել), kalkmak (վեր կենալ), durmak (կանգնել) և այլն:

Օրինակ՝ Çocuklar hep birlikte güldüler.

Երեխաները միասին ծիծաղեցին:

Թուրք հետազոտողները, կրավորականության ածանցն ընդունելով որպես անանցողականության ածանց, կրավորական բայերը բնութագրում են որպես անանցողական բայեր: Հայտնի թուրք լեզվաբան Մ. Էրզինը նշում է⁵. «Պասիվության և կրավորական ածանցով կազմվող բոլոր բայերն արտահայտում են եղելություն, այսինքն՝ անանցողական են: Այդ պատճառով պասիվության և կրավորական ածանցն անվանում են նաև անանցողականության ածանց»: Իսկ Ջ. Քորքմազը տալիս է հետևյալ սահմանումը. «Կրավորական սեռի ածանցներն անցողական

¹ Աբրահամյան Ա. Ա., *Բայր ժամանակակից հայերենում*, Ե., 1962, էջ 503:

² Koç N. *Yeni Dilbilgisi*, İstanbul, 1996, s. 338.

³ Նույն տեղում:

⁴ Hengirmen M. *Türkçe Dilbilgisi, Yabancılar için*, Ankara, 1999, s. 133-134.

⁵ Uzun, Nadir Ergin. *Anaçizigileriyle Evresel Dilbilgisi ve Türkçe*, İstanbul, Multilingual Yayınları, 2000.

բայերը վերածում են անանցողական բայերի»⁶: Մեկ այլ թուրք լեզվաբան Մ. Բյորեքչիի համաձայն՝ իրականում գոյություն չունի անցողական բայը անանցողականի, անանցողական բայն էլ անցողականի վերածող ածանց: Բայի սեռի ածանցները կարգավորում են բայի հետ գործողությունը կատարողի հարաբերությունը⁷: Օ. Դեմիրջանը, բնութագրելով թուրքերենի անցողական և անանցողական բայերը, ընդգծում է, որ թուրքերենում անցողականության «ուղիղ խնդիրը» կարող է որոշվել կամ ըստ երկու նշանակության բայերի, կամ էլ բայական ձևերի... չի կարելի անցողական բայերը բնորոշել անանցողական, երբ դրանք ստանում են – *l/n/s* ածանցներ⁸:

Վերոնշյալ տեսակետները միմյանց հակադրվող երկու մոտեցումներ են: Իսկ Բ. Յուջելն էլ նշելով, թե «Բայի սեռը դիտարկելով ենթակայի՝ բայի հետ ունեցած հարաբերությամբ, պետք չէ սեռն ընկալել որպես անցողականության և անանցողականության դրսևորումներ: Շատ ավելի տեղին կլինի դրանք բնութագրել որպես բայի մի բնորոշում»⁹:

Ստորոգյալի՝ ուղիղ խնդրի հետ ունեցած կապը, անցողականությունը և անանցողականությունը, կրավորականությունը մի վիճակ է, որը որոշում է ենթակայի և ստորոգյալի հարաբերությունը: Չնայած այն բանին, որ երկուսն էլ տարբեր կատեգորիաներ են ձևավորում, պետք չէ անտեսել այն հանգամանքը, որ դրանք սերտաձած են միմյանց: Իրականում թուրքերենում անցումն անանցողականությունից անցողականության իրականացվում բայասեռի ածանցների միջոցով: Սակայն կրավորականության ածանցն էլ իր հերթին անանցողականության ածանց չէ: Եթե այդպես լիներ, պետք է, որ այն չկցվեր անանցողական բայերին: Սակայն այդ ածանցը հնարավոր է կցել անցողական և անանցողական բոլոր բայերին: Մեր կարծիքով, կրավորական բայը պարտադիր չէ, որ անցողական լինի: Այլ կերպ ասած, կրավորականության ածանցը անցողականությունը վերացնող բնույթ չունի: Այդ պատճառով, եթե անցողական բայը ստանում է կրավորական ածանց, շարունակում է պահպանել իր անցողականությունը:

Անցողական կրավորական բայերի կազմած նախադասություններում մակերեսային կառույցում տեղ գտած միավորը ոչ այլ ինչ է, եթե ոչ ուղիղ խնդիր: Ուղիղ խնդիրը թուրքերենում ենթակայից հետո ամենաշատ գործածվող նախադասության անդամներից է: Ուղիղ խնդիր լինելու պայմանն է՝ ազդվել ենթակայի կատարած գործողությունից, այսինքն՝ լինել անուն, կցվել ածանցավոր կամ անաձանց հայցական հոլովով դրված ձևի ցուցիչներին: Սակայն այդ ազդեցության գործողությունը կարող է իրականացվել տարբեր ձևերով: Օրինակ՝ *Çocuk kurtarıldı* (երեխաները փրկվեցին), *ağaçlar kesildi* (ծառերը կտրվեցին), *çamaşırlar*

⁶ Korkmaz, Zeynep. Türkiye Türkçesi Grameri (Şekil Bilgisi), Ankara, TDK Yayınları, 2003, s. 547

⁷ Börekçi, Muhsine. Türkçe Öğretimi Bakımından Çatı Kavramı, V. Uluslararası Türk Dili Kurultayı Bildirleri I, Ankara, TDK Yayınları, 2004, s. 490.

⁸ Demircan, Ömer. Türk Dilinde Çatı, İstanbul, Papatya Yayıncılık, 2003, s.138-139.

⁹ Yücel, Bilal. Türkiye Türkçesinde Fiil Çatıları, Türk Gramensinin Sorunları II, Ankara, TDK Yayınları, 1999, s. 167.

asıldı (լվացքը փոփեց) օրինակներում բայերը և՛ ենթակայի զեղչված լինելու, և՛ մակերեսային կառուցվածքում չերևալու պատճառով կրավորական են, ինչպես նաև բայից ազդվող միավորների պատճառով՝ անցողական:

Որոշ խորհրդային թուրքագետ լեզվաբաններ անուղղակի խնդիր ընդունող անցողական բայերն առանձնացնում են՝ դրանք դիտելով որպես թեք անցողական բայեր: Այսպիսի դասակարգում է կատարում նաև խորհրդային թուրքագետ լեզվաբան Ն. Կոնոնովը: Ըստ նրա դասակարգման՝ ժամանակակից թուրքերենի բայերն օբյեկտի հետ ունեցած հարաբերության տեսանկյունից բաժանվում են երեք խմբի՝ ուղիղ-անցողական բայեր, կրավորական-անցողական բայեր, անանցողական բայեր:

1. Ուղիղ անցողական բայերը մատնանշում են այնպիսի գործողություն, որն անմիջականորեն անցնում է առարկային և ընդգրկում առարկան ամբողջությամբ: Ընդ որում, առարկան դրվում է ուղիղ կամ հայցական հոլովներով: Այս խմբի բայերը ձևաբանական հատկանիշներով բաժանվում են անձնական-ուղիղ-անցողական և պատճառական-ուղիղ-անցողական բայերի:

Անձնական-ուղիղ-անցողական բայերի անցողականությունը պայմանավորված է հենց բայական հիմքի բառային նշանակությամբ, իսկ հիմքը կարող է լինել՝

ա) պարզ, արմատական՝ al - mak (վերցնել), yaz - mak (գրել), ver - mek (տալ), vur - mak (խփել), gor - mek (տեսնել), sev - mek (սիրել) և այլն.

բ) ածանցավոր՝ բաղկացած անուններից և բայականական տարրերից՝ - la, - le, ավելի քիչ՝ - a, - ar ածանցներից, ինչպես etmek (անել, կատարել), eylemek (անել, կատարել), buyurmak (կարգադրել, հրամայել), kılmak (անել, կատարել) բայերից, օրինակ diş-le-mek - կծել (diş-ատամ), kap-a-mak - փակել (kap- ծածկ), kabul etmek/eylemek/buyurmak/kılmak - ընդունել:

Վերոհիշյալ ածանցների և բայերի օգնությամբ կազմված հիմքերի անցողական նշանակությունը կապված չէ այդ ձևաբանական ցուցիչների հետ, քանի որ բայական հիմքերի անցողականությունը կամ անանցողականությունն ամբողջությամբ կախված է ածանցավոր բայի անվանական մասի բառային նշանակությունից:

Պատճառական-ուղիղ-անցողական բայերը կազմվում են անցողական և անանցողական հիմքերից՝ պատճառական սեռի ածանցների օգնությամբ, որոնց շնորհիվ անանցողական բայերը դառնում են անցողական, իսկ անցողականները՝ կրկնակի անցողական¹⁰:

Ն. Քոչըր ևս նշում է, որ թուրքերենի անանցողական բայերը բայասեռի փոփոխությամբ դառնում են անցողական՝ բայահիմքին ավելացնելով

¹⁰ Кононов А. Н. Грамматика современного турецкого литературного языка, М., -Л., 1956, с. 205.

պատճառական (ettirgen) սեռի ածանցներ՝ -t, -r, -dır¹¹.

Օրինակ՝ gülmek – güldürmek (ծիծաղել – ծիծաղեցնել), okumak – okutmak (կարդալ – կարդալ տալ), ölmek – öldürmek (մեռնել – սպանել), oturmak – oturtmak (նստել – նստեցնել), korkmak-korkutmak (վախենալ – վախեցնել), yatmak-yatırmak (պառկել – պառկեցնել):

Ժամանակակից թուրքերենում թե՛ անձնական-ուղիղ-անցողական և թե՛ պատճառական-ուղիղ-անցողական բայերը (կազմված անցողական հիմքերից), Ն. Կոնոնովի դիտարկմամբ, կարող են ունենալ և՛ հայցական, և՛ տրական հոլովներով դրված խնդիրներ¹²:

Օրինակ՝ Ali'ye elma (yı) verdiler.

Երեխային խնձոր(ը) տվեցին:

Ուղիղ-անցողական բայերը ցույց են տալիս.

ա) կոնկրետ գործողություններ, որոնք ուղղված են առարկային և նրանում առաջ են բերում ինչ-որ փոփոխություններ կամ առարկան դարձնում են գործողության արդյունք.

օրինակ՝ mektup/mektubu yazmak – նամակ // նամակը գրել
bina/binayı inşa etmek – շենք//շենքը կառուցել
birini güldürmek – մեկին ծիծաղեցնել

բ) մի առարկայի զանազան ներգործությունները կամ ազդեցությունները (ուղիղ և փոխաբերական իմաստով) մյուսի վրա.

օրինակ՝ kızına dikiş öğretmek – դստերը կարել տվորեցնել
öğrenciyi övmek – աշակերտին գովել

գ) տարբեր ընկալումներ, զգացողություններ և նման գործողություններ՝ ուղղված առարկային.

Օրինակ՝ birini görmek – ինչ-որ մեկին տեսնել
musiki sevmek – երաժշտությունը սիրել:

2. Անուղղակի-անցողական (թեք-անցողական) բայերն այնպես, ինչպես ուղիղ-անցողականները, արտահայտում են մի գործողություն, որն անցնում է առարկային, բայց առարկան դրված է ոչ թե հայցական հոլովով, այլ տրական, բացառական և ներգոյական (տեղի) հոլովներով կամ էլ ile /- la/-le հետդիրքի համադրությամբ.

օրինակ՝ O masaya yaklaşıyor. – Նա մոտենում է սեղանին:

Ben Ermenistandan dönüyorum. – Ես Հայաստանից եմ վերադառնում:

O ne ile (neyle) geldi? – Նա ինչո՞վ եկավ:

3. Անանցողական բայերը ևս բաժանվում են երկու խմբի՝ անձնական-անանցողական և ածանցավոր-անանցողական:

¹¹ Коч Н., նշվ. աշխ., էջ 338-339:

¹² Кононов А. Н., նշվ. աշխ., էջ 206-207:

Անձնական-անանցողականներն այնպիսի բայեր են, որոնց անանցողականությունը, այսինքն՝ գործողության ամփոփումն իր մեջ, պայմանավորված է հենց բայի բառային նշանակությամբ, որն այս դեպքում արտահայտում է դրություն կամ ընթացք.

Օրինակ՝ yazmak - գրել
oturmak - նստել

Անանցավոր-անանցողականները փոխադարձ, անդրադարձ կամ կրավորական սեռի բայերն են.

Օրինակ՝ bakışmak - իրար նայել (փոխադարձ բայ)
yılanmak - լվացվել (անդրադարձ բայ)
denmek - ասվել (կրավորական բայ)

Բայերի՝ վերոհիշյալ երեք խմբերի բաժանումը, իհարկե, հիմք չի ընդունվում քերականագիտության մեջ, և թեք-անցողական բայերը համարվում են անանցողական: Այստեղ ևս երևան է գալիս հակադրության սկզբունքը, ուղիղ խնդիր ընդունող բայերը հակադրվում են այդպիսի հատկություն չունեցող բայերին: Իսկ թեք-անցողական կամ անուղղակի-անցողական բայերն ընդունում են անուղղակի խնդիրներ, բայց ոչ ուղիղ խնդիր, հետևաբար դրանք անանցողական բայեր են:

Ըստ գործողությունն իրականացնողի (սուբյեկտի) և առարկայի (օբյեկտի) հետ հարաբերության՝ անանցողական բայերը կարող են բաժանվել հետևյալ խմբերի.

ա) անանցողական անօբյեկտ-սուբյեկտային բայեր, որոնց գործողությունը չի կարող անցնել դեմքի կամ առարկայի վրա.

օրինակ՝ uyumak - քնել
durmak - կանգնել

բ) անանցողական անսուբյեկտ-անօբյեկտ կրավորական սեռի բայեր, որոնք կազմված են անանցողական բայական հիմքերից ու շարժման բայերից և անորոշ-անձնական նախադասությունների ստորոգյալներ են: Այդպիսի բայեր կարող են լինել uyumak («uyumak - քնել» բայի անորոշ-անձնական ձևը), uyanılmak («uyanmak - արթնանալ» բայի անորոշ-անձնական ձևը), gidilmek («gitmek - գնալ» բայի անորոշ-անձնական ձևը) և այլ բայեր.

գ) անանցողական անսուբյեկտ-օբյեկտային կրավորական սեռի բայեր, որոնց դեպքում գործող անձն ընկալվում է որպես անորոշ-անձնական, իսկ օբյեկտը՝ դրված թեք հոլովներով կամ ile հետդիրի հետ, առկա է կամ ենթադրվում է¹³.

օրինակ՝ (bir şeye) bakılmak (bakmak բայի անորոշ-անձնական ձևը) –

(մի բանի) նայել

(bir şeyden) hoşlanılmak (hoşlanmak բայի անորոշ-անձնական ձևը) –

(մի բանից) հաճույք ստանալ

(birisiyle) uğraşılmak (uğraşmak բայի անորոշ-անձնական ձևը) –

(ինչ-որ բանով) զբաղվել, զբաղված լինել:

¹³ Նույն տեղում, էջ 206-207:

Հիշեցնենք, որ անանցողական բայերի կրավորական ձևն արտահայտում է ոչ թե կրավորականություն, այլ պարզապես անորոշ-անձնական նշանակություն:

Մասնագիտական ընդհանուր գրականության մեջ բայերը, ըստ խնդրառական հատկանիշի, բաժանվում են նաև ենթակայական և առարկայական տեսակների¹⁴: Որն է տեսակի խնդիր չընդունող բայերը կոչվում են ենթակայական, իսկ ընդհանրապես խնդիր ընդունող բայերը՝ առարկայական:

Ժամանակակից թուրքերենում ոչ բոլոր առարկայական բայերն են համարվում անցողական, այլ դրանցից միայն այնպիսիները, որոնք պահանջում և ընդունում են ուղիղ խնդիր (այլ խնդիրներ ևս կարող են ընդունել կամ չընդունել): Առհասարակ անանցողական կարող են լինել բոլոր ենթակայական բայերը (առհասարակ խնդիր չունեցող բայերը) և այնպիսի առարկայականները, որոնք չեն պահանջում և չեն ընդունում ուղիղ խնդիր, իսկ անուղղակի խնդիրներ ընդունում են¹⁵: Անցողականության և անանցողականության որոշումը կատարվում է անկախ նրանից, թե բայերն ուրիշ հոլովներով արտահայտվող այլ տեսակի խնդիրներ ընդունո՞ւմ են, թե՞ ոչ: Անանցողական շատ բայեր, չունենալով հայցական հոլովով ուղիղ խնդիր պահանջելու և ընդունելու հատկություն, կարող են ընդունել ուրիշ հոլովներ, ինչպես և կապերով ու դրանց խնդիրներով արտահայտվող խնդիրներ, ինչպես՝ *binaya yaklaşmak* (մոտենալ շենքին), *karanlıktan korkmak* (վախենալ մթությունից), *Nuriye uğraşmak* (հասնել Նուրիին) և այլն:

Ժամանակակից թուրքերենում քերականական որոշ միջոցների գործադրումով անցողական բայերին կարելի է հաղորդել անանցողականության հատկանիշ, և ընդհակառակը, անանցողականներին՝ անցողականության (իհարկե, ոչ առանց բացառության): Այստեղ գործ ունենք հիմնականում կրավորական և պատճառական ածանցումների հետ, որոնք հնարավորություն են տալիս անցողական բայից անանցողական, իսկ անանցողականից անցողական բայաձևեր ստանալու: Թուրքերենում բային անանցողականություն են հաղորդում -l, -n կրավորական սեռի ածանցները (անանցողական իմաստ ունեն նաև փոխադարձ-համատեղ և անդրադարձ սեռերը), իսկ անցողականության՝ -dir (-tir). -r, -t պատճառական սեռի ածանցները¹⁶:

Օրինակ՝ *bölmek* (բաժանել-անցողական բայ) – *bölünmek* (բաժանվել-անանցողական բայ), և *halkaşmak* (քնել-անցողական բայ) – *uyutmak* (քնեցնել – անանցողական բայ):

Կախված նախադասության մեջ իրենց արտահայտած իմաստից՝ մի շարք բայեր կարող են լինել և՛ անցողական, և՛ անանցողական.

օրինակ՝ *Yolculuk iki gün sürdü.* (անանցողական բայ)

¹⁴ Արթուրյան Ա. Ա., նշվ. աշխ., էջ 503:

¹⁵ Նույն տեղում, էջ 504:

¹⁶ Hengirmen M., նշվ. աշխ., էջ 133-134:

Ճանապարհորդությունը երկու օր տևեց:

Çiftçi tarlayı sürdü. (անցողական բայ)

Հողագործը արտը վարեց:

Dün bahçede gezdim. (անանցողական բայ)

Երեկ պարտեզում զբոսնեցի:

Dün bahçeyi gezdim. (անցողական բայ)

Երեկ պարտեզում զբոսնեցի:

Արդեն խոսվել է, որ նախադասության մեջ անցողական բայի պահանջած ուղիղ խնդիրը ստանում է հայցական հոլովի վերջածանց (ı, i, u. ü), երբ առկա է որոշյալ առում: Այդ ուղիղ խնդիրը կոչվում է որոշյալ.

օրինակ՝ Ali gazeteyi masanın üzerine koydu.

Ալին թերթը սեղանի վրա դրեց:

Անորոշ առման առկայության դեպքում ուղիղ խնդիրը, որն այս դեպքում կոչվում է անորոշ, հայցական հոլովի վերջածանց չի ստանում¹⁷.

օրինակ՝ Ahmet mektup yazıyor.

Ահմեդը նամակ է գրում:

Թուրքերենում, երբ սովորական անցողական բայն օգտագործվում է առանց ուղիղ խնդրի, միտում կա ապահովելու նման խնդիր գոյականով՝ բայի միևնույն արմատից¹⁸: Այդ խնդիրները կարելի է նույնիսկ չթարգմանել:

Օրինակ՝ yazı yazmak (գրել, գրություն գրել)

Babam, odasında mektuplarını yazıyor. - Հայրս սենյակում նամակներ է գրում:

Babam, odasında yazı yazıyor. - Հայրս սենյակում գրում է:

yemek yemek (ուտել, հաց ուտել)

Bugün et yemedim. - Այսօր միս չկերա:

Bugün yemek yemedim. - Այսօր հաց չկերա (ոչինչ չկերա):

Dikiş dikmek (կարել, կար անել)

Karım gömleğini dikiyor, - Գինս վերնաշապիկս է կարում:

Karım dikiş dikiyor. - Գինս կար է անում:

Ահա նման ուղիղ խնդրով մի քանի բայ *bu*՝ kaçış kaçmak (փախչել, փախուստ տալ), düşüş düşmek (ընկնել), yaş yaşamak (ապրել) և այլն: Բնչպես նկատեցինք, այս բայերն անանցողական էին և ուղիղ խնդրի կարիք չունեին, սակայն խոսքի մեջ նման կապակցություններ հաճախ կարելի է հանդիպել¹⁹.

օրինակ՝ Bir kaçış kaçtı ki yetişmek olanaksız.

Այնպես փախավ, որ հասնելն անհնար էր:

Bir düşüş düştü ki öldü sandım.

Այնպես ընկավ, որ կարծեցի, թե մահացավ:

¹⁷ Gencan T. N., նշվ. աշխ., էջ 126:

¹⁸ Lewis G. Teach yourself Turkish, London, 1955, p. 71.

¹⁹ Koç N., նշվ. աշխ., էջ 339:

Այսպիսով, լեզվի այս առանձնահատկությունը թելադրում է տարբերել երկու տեսակի անցողականություն և անանցողականություն, այն է՝ սկզբնաձևային (կամ սկզբնատիպային) և ձևակազմական: Այլ կերպ ասած՝ անցողականությունը և անանցողականությունը սկզբնաձևային են, երբ բայական բառույթի մեջ հանդես են գալիս «բնական» (սկզբնական) դրությամբ, և այդպիսի հատկանիշի արտահայտման համար բայ բառույթը հատուկ ձևակազմության չի ենթարկվում:

Թուրքերենում այդպիսի բայեր են հիմնական սեռի բայերը, որոնց հիմքերն առանց որևէ ածանցման արտահայտում են անցողականություն կամ անանցողականություն:

Ձևակազմական անցողականություն և անանցողականություն ասելով՝ նկատի ունենք այնպիսի անցողականությունն ու անանցողականությունը, երբ այդ հատկանիշներից մեկը կամ մյուսը այս կամ այն բառույթի մեջ դրվում է հատուկ ձևակազմությամբ: Քանի որ թուրքերենի պատճառական, կրավորական, փոխադարձ-համատեղ և անդրադարձ սեռերը կազմվում են հիմնական սեռից որոշակի ածանցներով, ապա դրանց արտահայտած անցողականությունը կամ անանցողականությունը ձևակազմական է: Վերոհիշյալ սեռերից միայն պատճառականն է արտահայտում անցողականություն:

ГЛАГОЛЬНЫЕ КАТЕГОРИИ ПРОХОДИМОСТИ И НЕПРОХОДИМОСТИ В СОВРЕМЕННОМ ТУРЕЦКОМ ЯЗЫКЕ

ЗАКАРЯН Ш. И.

Резюме

В тюркском языке различают два вида глагольной проходимости (gezi li) и непроходимости (gezi siz): начальной формы (первоначального типа) и формообразовательную. При начальной форме лексема выступает в своем “естественном” виде, не подвергаясь специальному формообразованию. А формообразовательная проходимость и непроходимость проявляются особым формообразованием в лексеме. В современном тюркском языке с помощью некоторых грамматических средств проходимые глаголы можно превратить в непроходимые, и наоборот, непроходимые – в проходимые (разумеется, не без исключений).